

« Հ Ա Ս Ս Պ »

«Սիոն» սրտադին ուրախութեամբ կ'ողջունէ հրատարակումը Անթիլիանի կիլիկիան Հայրապետանոցի «Հասկ» ամսութեթին, որ իր առաջին թիւին մէջ իսկ կը յայտնէ արդէն թէ ինչ գեղեցիկ ապագայի է ուղղուած:

Առ այժմ անիկա կը պարունակէ կիլիկիոյ կաթողիկոսութեան հոգեւոր կեդրոնին կրօնական, կրթական և վարչական գործառնութեանց մասին տեսութիւններ և լրատուական տեղեկութիւններ, որոնք վստահ ենք թէ ուրախութեամբ պիտի կարգացունեն ոչ միայն կիլիկիոյ վիճակայիւններուն՝ այլ և ամբողջ Հայութեան կողմէ, քանի որ պատկերացումն են քայլ առ քայլ այն յառաջացումին և բարգաւաճումին, զոր յայտնապէս պիտի ունենայ Սիւրիոյ Հայութիւնը, շնորհիւ Աթոռակալ և Աթոռակից զոյգ կաթողիկոսներու արթուն հրահրողութեան և Շահէ Սրբազանի և այլոց նուիրումի անկեղծ ոգիին:

Չունինք տարակոյս թէ «Հասկ» շուտով պիտի առքանայ, և կրօնաթերթի վիճակին վերածուելով որոյ կապէ, լինելու համար կիլիկիոյ և ընդհանուր հայութեան համար հոգեւորապէս և կրթական ու մտաւորական տեսակէտով շատ աւելի օգտակար պարբերաթերթ մը:

Ամէն անոնք որ գուրգուրանքով չըրջապատեցին Սուրիոյ մէջ կիլիկիոյ կաթողիկոսութեան վերահաստատման գաղափարը, Սուրիոյ հայութեան մէջ կրօնական վերադարձումի համար թափած ջանքերը խանդավառութեամբ ողջունեցին, մեզի հետ անգամ մը ևս պիտի հրճուն կաթողիկոսարանի առած այս քայլին համար: Հյգ. Եկեղեցւոյ բերրի բայց անմշակ հողին վրայ բուսած դեռ այժմ վտիտ «Հասկ»ը, լուազոյն հունձքի մը հեռանկարը կը պարզէ մեր առջեւ:

Այգալիսի իղձերով անոր Պատ. Խրմբագրութեան կը ներկայացնենք մեր բարեմաղթու գգացմանց հետ մեր խնդակց շնորհաւորութիւնները:

Հասկի՝ H A S K

Revue Mensuelle Arménienne
Catholicossat Arménien

ANTÉLIAS, Rep. Libanaise

Բաժնեկից սարեկան 10 Ֆրանկ Ֆրանս. (ամեր. 75 անիս՝ արտասահմանի համար):

Ս. ՅԱԿՈԲԻՆԵՐՍԷՆ

ՈՍԿԱՆ ՊԵՅ ՄԱՐՏԻԿԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ասկէց առաջ Ս. Պատրիարք Հայրը, Պատ. Տնօրէն Թողոլոյ համամտութեամբ, հրաւեր ուղղած էր Վսեմ. Ռսկան Պէյ Մարտիկեանի՝ այցելել Ս. Երուսաղէմ, և Ս. Աթոռոյ երկամտական կացութեան մասին քննական ուսումնասիրութիւն մը կատարելով տեղեկագիր մը կազմել, որպէս ըստ այնմ տնօրէնութեան պարտաւստահանէ:

Հաճութեամբ կը հաղորդենք թէ Մարտիկեան Պէյ, որուն այս մասին ձեռնհասութիւնը անյիշելի է, ընդունած է այս հրաւերը, և դէպի գարուն պիտի ժամանէ Գաղաթ, ձեռնարկելու համար իր ստանձնած պարտականութեան:

Այս պաշտօնական տեղեկութեամբ կը յուսանք թէ ընդ միշտ կը վարատին այն թիւրիմացութիւնները, որոնք զանազան հայ թերթերու մէջ տեղ գտած էին այս մասին, և որոնք, սակայն, ամէնքն ալ հետեանք էին այդ խնդրոյն շուրջ ինքնաբերաբար գոյացած խանդավառութեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. Ա. Բրանդ, որ Եպիսկոպոսական Եկեղեցւոյ կղերին կը պատկանի և Ս. Փաղաքս ուխտաւոր եկած էր, յունուար 28-ին Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Ի և Կան. Հ. Պրիշմանի կողմէ ներկայացուեցաւ Սրբազան Պատրիարք Հօր:

Յ. Երուսաղէմի Գերմանական հիւպատոս Պր. Նորդ Սրբազան Պատրիարք Հօր այցելեց փետր. 2-ին:

Յ. Երուսաղէմ Նահանգի կառավարչի օգնական Մր. Սուլման իր պաշտօնով Նապլուս փոխադրութեան առթիւ, փետր. 3-ին, հրաժեշտի այցելութիւն տուաւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, և ներկայացուց իր յաջորդը, Մր. Ջոճի Մակկարէն:

Նորին Ամենապատուութիւնը սիրալիք ընդունելութիւն մ'ըրաւ հիւրերուն, շնորհաւորեց անոնց նոր պաշտօնները և մաղթանքներ ըրաւ:

Յ. Պաղեսիցի Բարձր Կոմիտէ Վսեմ. Սրբ. Արքուր Ռոմպ, իր հետ ունենալով Երուսաղէմի Պր. Փոխ-Կառավարիչը, Հնադիտական Վարչութեան Տնօրէնը, Ոստիկանական հրամանատարը և իր Թիկնապահը առաջին անգամ ըլլալով փետր. 6-ին պաշտօնապէս այցելեց Ս. Յարութեան Տաճարը և պատեցաւ անոր զանազան մասերը:

Նորին Վսեմութիւնը պատշաճօրէն ընդունուեցաւ երեք իրաւակից ազգերու Ս. Յարութեան

թեան Տեսուչներուն կողմէ: Պատրիարքարանի կողմէ յատկապէս ներկայացուցիչ զրկուած էին Հոգ. Տ. Տ. Գէորգ և Կիւրեղ վարդապետները:

● Բամազան Պայրամի առթիւ փետրուար 8-ին Պատր. Փոխանորդ Դեր. Տ. Մկրտիչ Ս. Եպիսկոպոս Աղաւնունի, հետն ունենալով Հոգ. Տ. Տրդատ վրդ. ր, շնորհաւորական այցելութիւն տուաւ Մուսաղէմի Մեծ Մուճախին (ն. վ. էլ Հաճ էլ Հաւսէյնի), Երուսաղէմի Վսեմ. Բաղաւապետին (Բաղլայ Պէյ Նէշաշլայի), Բուրի Պէյի, Մուսա Քեմալիմ Փաշայի, Շէյխ Մահմուտ Էմինի, Իսմայիլ Պէյի, Նասուհի Պէյ Պէյաուսիի, և Ալի Ճաւալլահ Էմինի բնակարանները, և բացակայ գտնուողներուն ալ այցելումս թողուց:

● Պաղեստինի վսեմ. Բարձր Կոմիտէի քոյրը Յիկին Հոռը, հետեորդ տիկնոջ մ'ընկերակցութեամբ Ս. Յակոբեանց վանքը այցելեց փետր. 8-ին, և Հոգ. Տ. Կիւրեղ վարդապետի կողմէ առաջնորդուեցաւ Մայր Տաճար, Պատրիարքարան և վանուցս այլ մասերը:

● Եգիպտոսի վարչապետը Ն. Վ. Իսմայիլ Սըսկի Փառա փետր. 9-ին Երուսաղէմի Կայաւրանը ժամանեց և ընդունուեցաւ պատշաճ շքով:

Ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Փոխանորդ Սրբազանը (Դեր. Տ. Մկրտիչ Եպո.), հետն ունենալով Հոգ. Տ. Գէորգ վրդ. ր կայաբանի մէջ բարի զուլուստ մաղթեց Նորին վսեմութեան:

Նոյն օրը յետ միջօրէին Սրբազան Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ վրդ. ր և Դիւանապետ Պր. Կ. Նուրեանը, ներկայ գրտնուեցաւ վսեմ. Բարձր Կոմիտէին ապարանքին մէջ ի պատիւ Եգիպտոսի վսեմ. վարչապետին տեղի ունեցած պաշտօնական ընդունելութեան և թէյասեղանին:

● Սրբազան Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Տ. Համազասպ և Կիւրեղ վրդ. ներք և Տիար Կ. Նուրեանը, փետր. 10-ին այցելեց Մեծարդոյ Տիար Զեւեթիմ Մուրաթին, Երուսաղէմի Դերմանական Հիւանդանոցին մէջ, և իր ցաւակցութիւնները յայտնեց, անոր քննորդուոյն Յովսէփի Պր. Օննիկ Զէթինեանի մահուան առթիւ:

● Նոյն օրը (10 փետր.) Սրբազան Պատրիարք Հայրը, Հոգ. Տ. Կիւրեղ վրդ. ր և Պր. Կ. Նուրեանի հետ ներկայ գտնուեցաւ Կիկոյ Դէվլիյ Օտեղին մէջ եգիպտական հիւպատոսին կողմէ ի պատիւ Եգիպտոսի վարչապետ Սըսկի Փառայի տրուած թէյասեղանին:

● Փետր. 17-ին Սրբազան Պատրիարք Հօր այցելեց Թամէէի Կառաւարիչ Պր. Է. Զ. Պոլլոյի:

● Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ վրդ. ր, փետր. 22-ին ներկայ գտնուեցաւ քաղաքիս Ամբրիկեան Հիւպատոսարանին մէջ Նախագահ Ուաշինգտոնի ծննդ-

դեան երկնարեւոմակին առթիւ տեղի ունեցած ընդունելութեան և թէյասեղանին:

● Հոգ. Տ. Կիւրեղ վրդ. ր և վեր. Հայր Պրիշմանի առաջնորդութեամբ փետր. 25-ին Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր ներկայացաւ Անգլիացի վեր. Արեւստան Ռիլէյ (Նախագահ Անգլիկան և Արեւելեան Եկեղեցիներու Ընկերակցութեան) հետն ունենալով վեր. Հայր Բրիտտոնը, Յարգելի հիւրերը կէս ժամի շափ սիրալի տեսակցութիւն մը ունեցան Նորին Ամենապատուութեան հետ: Ներկայ էր նաև Լուսարարապետ Սրբազանը:

ՈՒՂՂԱՓԱՌ ԱՍՈՐԻՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԿԻ ՎԱՍԵՄՆՈՒՄԸ

Վերջերս Հնդկաստանի մէջ յախճանած Ասորոց Ամենաթիւ Կրդ. Պատրիարքին, Ամեն Տ. Իգնատիոս Էլիաս Դ. Կոչոյն համար հոգեհանգրտեան պաշտամունք տեղի ունեցաւ փետր. 21-ին քաղաքիս Ասորոց Ս. Մարկոս եկեղեցիին մէջ:

Պատր. Փոխանորդ Դեր. Տ. Մկրտիչ Սրբազան, Հոգ. Տ. Պարգև վրդ. ր հետ ներկայ գտնուեցաւ նոյն պաշտամունքին և այցելութիւն տալով Փոխանորդին, ցաւակցութիւն յայտնեց Ասորի Միաբանութեան:

Այս այցելութեան յոխադարձաբար Ասորոց Եպիսկոպոսի Փոխանորդ Հոգ. Եպիսկոպ վրդ. ր, երկու միաբան հետեորդներով փետր. 25-ին եկաւ շնորհակալութիւն յայտնել Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, Ս. Աթոռոյ կողմանէ յայտնուած ցաւակցութեանց համար:

— Ամեն. Տ. Իգնատիոս Կիկոյ. Պատրիարք ծնած է 1868 ին, Մալաթիա: Իր կրթութիւնը ստացած է Գիւլ-Էզզաբետի մէջ: Գիտէր ասորերէն, արաբերէն և թուրքերէն լեզուները: Վարած է Պետրոս Դ. Ասորոց Պատրիարքին աւագ քարտուղարութեան պաշտօնը:

Բազում անգամներ Նուրիակ գացած է այլևայլ տեղեր՝ լէճեր խաղաղեցնելու համար: 1895-ի Հարզին, Տիգրանակերտի մէջ, շատ մը զոհեր մահուրէն ազատած է, պահելով զանոնք Մար Կիրակոս վանքին մէջ: 1908-ին ձեռնադրուած է Եպիսկոպոս, Տիգրանակերտի մէջ: 1912-ին անցած է Մուսուլ: 1915-ին եղած է Պատրիարքական Տեղապահ: Ջանադիր եղած է ասորիներու մէջ զրպարոցական գործին զարգացման: 1917-ին ընտրուած է Պատրիարք Անտիօքայ: Մեծ պատերազմէն ետք անցած է Կոստանդնուպոլիս և չքանչան ստացած է Սուլտան Ռահմէտտինէ: Երեք տարի Կ. Պոլիս մնալէ ետք՝ անցած է Անգորա, այցելած է Մուստաֆա Քէմալ Փաշայի, որ հրաւիրած է զինք Ազգային Մեծ Ժողովի բացումին: 1923-ին քաշուած է իր աթոռը՝ Մարտին: 1925-1927 այցելած է Երուսաղէմ: 1927-1931 մնացած է Մուսուլ, ու ապա կարգ մը լէճեր կարգադրելու համար սկսեց զէպի Հնդկաստան, ուր պատանեցաւ իր յախճանումը:

Եղած է շինարար և կրթատէր պատրիարք մը: